ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/148

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.10.2018թ. թիվ 01.1/26-3/18937-18 գրությամբ «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 08414357) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 16.10.2018թ. թիվ 01/29-1055 գրության հիման վրա, 18.10.2018թ. նախաձեռնել է «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.10.2018թ. թիվ 01/29-1055 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին, որի բացման նիստը տեղի է ունեցել 2018թ. հոկտեմբերի 8-ին, գնային առաջարկ է ներկայացրել «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն: ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սակայն, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 2018թ. հոկտեմբերի 15-ի ներկայացված տեղեկատվության՝ «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (08.10.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 3.000 ՀՀ դրամի չափով պարտավորություն:

Նկատի ունենալով վերը նշվածը՝ հանձնաժողովը քննարկել և որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժել «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը:»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 23.10.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ս.թ. հոկտեմբերի 8-ին «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն մասնակցել է «Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին: Տեղյակ լինելով, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ կազմակերպությունը չպետք է ունենա հարկային պարտավորություն, www.taxservice.am կայքի միջոցով ներկայացվել է հարցում, որից հետո ՀՀ ՊԵԿ-ից էլեկտրոնային եղանակով ստացվել է տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ: Հիմք ընդունելով այն փաստը, որ կազմակերպությունը ստացված տեղեկանքի համաձայն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ներկայացրել ենք մրցույթին մասնակցելու հայտը:

Սակայն 15.10.2018թ.-ին տեղեկացել ենք, որ կազմակերպությունը 08.10.2018թ. դրությամբ ունեցել է 3.000 ՀՀ դրամի չափով պարտք դրոշմանիշային վճարի գծով, որը սակայն չի երևում ՀՀ ՊԵԿ-ից էլեկտրոնային եղանակով ստացված տեղեկանքում: Կից ներկայացնում ենք ՊԵԿ-ից ստացված հարցման պատասխանը, որտեղ որպես պարտավորություն երևում է միայն ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի 1.077.596 ՀՀ դրամ պարտքը, որի վճարման ժամկետն է սույն թվականի հոկտեմբերի 20-ը, և հետևաբար, չի համարվել ժամկետանց պարտք 08.10.2018թ. դրությամբ, ինչպես նաև այդ մասով ներմուծման հայտարարագրի օրինակը:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Սարգիս Ղալաչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.10.2018թ. թիվ 01.1/26-3/18937-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.10.2018թ. թիվ 01/29-1055 գրությունը, «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին 23.10.2018թ. ներկայացրած գրությունը, «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20»

ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 08.10.2018թ. նիստի թիվ 2 և 15.10.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի պատճենը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինանյութի գնման նպատակով կազմակերպված «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 08.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները կազմել են համապատասխանաբար 1.004.500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) և 22.500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գին ներկայացրած մասնակից:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը 08.10.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 08.10.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ

օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 3,000՝ ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

15.10.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովը՝ արձանագրելով «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելու օրվա ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը՝ որոշել է Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժել «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինանյութի գնման նպատակով կազմակերպված «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերությունը «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելուց առաջ, նույն օրը www.taxservice.am կայքի միջոցով, հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքից տեղեկացել է, որ 08.10.2018թ. դրությամբ Ընկերության՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները կազմել են 1.077.596 ՀՀ դրամ (ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի գծով), ընդ որում, նշված պարտավորության մարման վերջնաժամկետն է եղել 20.10.2018թ., այսինքն, տվյալ օրվա դրությամբ նշված պարտավորությունը դեռևս չէր կարող դիտարկվել որպես ժամկետանց հարկային պարտավորություն: Ինչ վերաբերում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 15.10.2018թ. եզրակացության մեջ արձանագրված՝ դրոշմանիշային վճարի գծով 3,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությանը, ապա, Ընկերության հավաստմամբ, վերը նշված քաղվացքում որևէ նման տեղեկատվություն արտացոլված չի եղել:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- 08.10.2018թ. դրությամբ Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը նշված օրվա դրությամբ ունեցել է ներմուծման

մասով ավելացված արժեքի հարկի գծով 1.077.596 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի մասով 108.353.040 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ;

- ներմուծման հարկային հայտարարագրի պատճենը, ըստ որի ապրանքների ներմուծման ամսաթիվը (օր, ամիս, տարի) նշված է 26.09.2018թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ, բացառությամբ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 08.10.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 3,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարըտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն

վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- 08.10.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 15.10.2018թ. եզրակացության մեջ արձանագրված՝ դրոշմանիշային վճարի գծով 3,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունն արտացոլված չի եղել:

- Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը ղեկավարվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, ըստ որի նույն օրվա դրությամբ Ընկերության՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների չափը կազմել է 1.077.596 ՀՀ դրամ (ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի գծով), ընդ որում, նշված պարտավորության մարման վերջնաժամկետն է եղել 20.10.2018թ.:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.10.2018թ. թիվ 01.1/26-3/18937-18 գրությամբ «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 08414357) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ